Ամփոփ նյութ

«ՏՈՒՌԵԿՍ ԳՈԼԴ» ՍՊԸ (ԼԻՑԵՆԶԻԱ ԹԻՎ 816) ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արժութային գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջները կոպտորեն խախտելու համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ «ՏՈՒՌԵԿՍ ԳՈԼԴ» ՍՊԸ (ԼԻՑԵՆԶԻԱ ԹԻՎ 816) փոխանակման կետի նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց:

Ստորև ներկայացված է որոշման վերնագիրը և եզրափակիչ մասը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՈՐՈՇՈՒՄ
02/02/2018 թ. թիվ 1/74Ա

«ՏՈՒՌԵԿՍ ԳՈԼԴ» ՍՊԸ (ԼԻՑԵՆԶԻԱ ԹԻՎ 816) ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սույն որոշմամբ նկարագրված խախտումը թույլ տալու համար Փոխանակման կետի նկատմամբ կիրառել նախազգուշացում՝ ապագայում նման խախտում թույլ չտալու հանձնարարականով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փոխանակման կետ մուտքագրվելու կամ Փոխանակման կետի՝ սահմանված կարգով լիազորված անձին հանձնվելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել երկամսյա ժամկետում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ**